

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 7

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 30.05.2014թ.

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ս.Դարբինյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ՝ Գ.Քալանթարյանը, Ա.Հարությունյանը, Վ.Դոխոյանը, Ա.Մատինյանը, Վ.Դավիթավյանը, Խ.Վարդանյանը,, Ա.Օհանյանը, Ս.Ղամբարյանը, Կ.Պառավյանը, Դ.Սիմոնյանը, Գ.Շահինյանը, Ա.Խաչատրյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին ավագանու անդամներ Ա.Գրիգորյանը, Հ.Մովսիսյանը, Ա.Ափինյանը, Ս.Աղաբեկյանը, Ա.Այվազյանը, Ս.Հակոբյանը, Ա.Փելեշյանը:

Նիստին մասնակցում էին նաև Ն.Սարգսյանը, Գ.Սիմոնյանը, Հր.Նազարյանը, Հ.Դավթյանը, Տ.Պապանյանը, Գ.Մացակյանը, Գ.Պառավյանը, Ա.Խսպիրյանը, Ա.Ավագյանը, Լ.Ստեփանյանը, Տ.Գրիգորյանը, Է.Արզումանյանը, Ա.Վերանյանը, ՋԼՄ-ների, ՀԿ-ների և ազգաբնակչության ներկայացուցիչներ:

Միաձայն քվեարկությամբ նիստն սկսվեց:

Մինչև օրակարգային հարցերի քննարկմանն անցնելը ավագանին ընդունեց քաղաքապետարանում աշխատանքի անցած համայնքային ինը ծառայողի երդումը:

Այնուհետև ներկայացվեց նիստի օրակարգը:

Միաձայն կողմ քվեարկությամբ հաստատվեց հետևյալ օրակարգը:

Օրակարգ՝

1. Վանաձորի համայնքի 2014 թվականի բյուջեի 3 ամսվա կատարման վերաբերյալ
զեկ.՝ Ա.Ավագյան
2. Վանաձորի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Վանաձորի համայնքի 2014թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին
զեկ.՝ Ա.Ավագյան
3. Վանաձորի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Վանաձորի համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
զեկ.՝ Ա.Ավագյան
4. 2015թ. պետական բյուջեից հայտավորվող «Վանաձոր քաղաքի Հալաբյան փողոցի կամրջի նորոգում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին
զեկ.՝ Ս.Կարապետյան
5. 2015թ. պետական բյուջեից հայտավորվող «Վանաձոր քաղաքի Գործարանային փողոցի թիվ 1 կամրջի նորոգում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին
զեկ.՝ Ս.Կարապետյան
6. 2015թ. պետական բյուջեից հայտավորվող ««Վանաձորի ծանրամարտի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին
զեկ.՝ Ս.Կարապետյան
7. «Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը առանձնացման ձևով վերակազմակերպելու, կանոնադրությունը և բաժանիչ հաշվեկշիռը հաստատելու մասին
զեկ.՝ Գ.Սիմոնյան
8. Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Վանաձորի համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 04-ի թիվ 2-Ա որոշման թիվ 2 հավելվածն ուժը կորցրած ճանաչելու մասին
զեկ.՝ Գ.Սիմոնյան

1.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի 2014 թվականի բյուջեի 3 ամսվա կատարման վերաբերյալ

զեկ.՝ Ա.Ավագյան

Ավագանու անդամ Գ.Քալանթարյանը նշեց, որ գումարները ՀԿ-ներին է հատկացվել առանց ավագանու համաձայնության: Նույն միտքն արտահայտեց նաև ավագանու անդամ Ս.Ղամբարյանը::

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

2.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Վանաձորի համայնքի 2014թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

զեկ.՝ Ա.Ավագյան

Ծավալված մտքերի փոխանակմանը մասնակցեցին ավագանու անդամներ Խ.Վարդանյանը, Ա.Խաչատրյանը:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

3.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Վանաձորի համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.՝ Ա.Ավագյան

Բարձրացված հարցի քննարկմանը մասնակցեցին ավագանու անդամներ Վ.Դավիթավյանը, Գ.Քալանթարյանը, իսկ ավագանու անդամ Խ.Վարդանյանն առաջարկեց հնարավորության դեպքում ֆինանսավորել նաև «Թիվ 19 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ը:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

4.ԼՍԵՑԻՆ - 2015թ. պետական բյուջեից հայտավորվող «Վանաձոր քաղաքի Հալաբյան փողոցի կամրջի նորոգում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին

զեկ.՝ Ս.Կարապետյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 11, (Ա.Խաչատրյանը քվեարկությանը չմասնակցեց), ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

5.ԼՍԵՑԻՆ - 2015թ. պետական բյուջեից հայտավորվող «Վանաձոր քաղաքի Գործարանային փողոցի թիվ 1 կամրջի նորոգում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին

զեկ.՝ Ս.Կարապետյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

6.ԼՍԵՑԻՆ - 2015թ. պետական բյուջեից հայտավորվող ««Վանաձորի ծանրամարտի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին

զեկ.՝ Ս.Կարապետյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

7.ԼՍԵՑԻՆ - «Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը առանձնացման ձևով վերակազմակերպելու, կանոնադրությունը և բաժանիչ հաշվեկշիռը հաստատելու մասին

զեկ.՝ Գ.Սիմոնյան

Ավագանու անդամ Գ.Շահինյանը իր և գործընկերների անունից շնորհակալություն հայտնեց ձմեռային մարզաձևերի մարզադպրոցի հովանավորներին, շեշտեց նրանց հայրենանվեր նախաձեռնության մասին:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

8.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Վանաձորի համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 04-ի թիվ 2-Ա որոշման թիվ 2 հավելվածն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Գ.Սիմոնյան

Մտքերի փոխանակմանը մասնակցեց Ա. Խաչատրյանը, իսկ ավագանու անդամներ Վ.Դավիթավյանն ու Խ.Վարդանյանը առաջարկեցին քաղաքապետարանի աշխատակազմի աշխատողների աշխատավարձերի սահմանման ժամանակ առաջնորդվել գործող օրենքներով և հաշվի առնել նաև աշխատակազմի մյուս աշխատակիցների շահերը:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Քվեարկությամբ՝ կողմ՝ 11, ձեռնպահ՝ 1 (Գ.Քալանթարյան), ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

Նիստն ավարտվեց:

Նիստի ավարտից հետո քաղաքապետ Ս.Դարբինյանը հարցեր տալու առաջարկությամբ դիմեց ավագանու անդամներին, սակայն հարցեր չեղան:

Ավագանու անդամներ՝

Գ.ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Գ.ՇԱՀԻՆՅԱՆ

Ս.ՂԱՄԲԱՐՅԱՆ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա.ՕՀԱՆՅԱՆ

Ա.ՄԱՏԻՆՅԱՆ

Կ.ՊԱՌԱՎՅԱՆ

Վ.ԴԱՎԻԹԱՎՅԱՆ

Վ.ԴՈՒՆՅԱՆ

Խ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դ.ՍԻՄՈՆՅԱՆ

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Հրահատ Նազարյանը _____